Փոքրածավալ հետազոտությունը լուսաբանում է «երեխայի ուղեղի ցամաքման» խնդիրը

Բրյուսել, 10 հունվարի, 2007թ.

21 երկրներում կատարած փոքրածավալ հետազոտության արդյունքները, որոնք այսօր հրապարակվել են, ցույց են տալիս, որ վերարտադրողական տարիքի 95% կանանց օրգանիզմում սնդիկը, որը հայտնաբերվել է նրանց մազերում, պարունակվում է նկատելի մակարդակներով: Սա անհանգստացնող է, քանի որ մի շարք գիտական զեկույցներում համոզիչ կերպով նշվում է, որ ցածր մակարդակներով սնդիկի ազդեցությունը պտղի վրա կարող է վնասել երեխայի ուղեղը: (1)

Դանիացի մանկաբույժ Գավին թեն Թասչերն իր զեկույցում, որը ներկայացվելու է այսօր, Բրյուսելում, գրում է. «Սնդիկը երկար ժամանակ համարվել է թունավորման աղբյուր երեխաների շրջանում, որը նվազեցնում է նրանց ճանաչողական ֆունկցիան, ներառյալ՝ ինտելեկտի գործակիցը: Այնուամենայնիվ, այժմ մենք տեսնում ենք, որ սնդիկը, նույնիսկ ցածր մակարդակով ազդելու դեպքում կարող է վնասել զարգացող պտղի և նաև մանկան ուղեղը: Սրանք սնդիկի այն մակարդաչափերը չեն, որոնք հասուն մարդկանց մոտ առաջացնում են սուր թունավորումներ և վատառողջություն»: (2)

«Մնացեք առողջ, դադարեցրեք սնդիկի օգտագործումը» քարոզարշավը, որը պատասխանատու է հետազոտության և հաշվետվության համար, նպատակաուղղված է Եվրոպայում և ողջ աշխարհում շրջակա միջավայրի սնդիկային աղտոտման հետևանքով «երեխայի ուղեղի հնարավոր ցամաքման» մասին իրազեկության բարձրացմանը: Քարոզարշավը համակարգող՝ «Առողջության և շրջակա միջավայրի միություն» և «Առողջապահությունն առանց վտանգ պատճառելու» խմբերը կոչ են անում Եվրոմիությանը՝ լինել առաջատարը շրջակա միջավայրի սնդիկային աղտոտման վերահսկմանն ուղղված ջանքերում՝ սնդիկի գործածության վրա արգելք դնելու միջոցով: (3)

Զեկույցը ցույց է տալիս, որ հետազոտությանը մասնակից հատկապես որոշ կանայք անհանգստացած են, քանի որ նրանք իրենց աշխատավայրում ենթարկվել են սնդիկի ազդեցությանը: Օրինակ, Մարիա Տոնևան, որն աշխատում է Բուլղարիայի քիմիական գործարանում, ասում է. «Ես ուզում էի մասնակցել հետազոտությանը, որովհետև իմ աշխատավայրում գործ ունեմ սնդիկի հետ: Երկար ժամանակ ես անհանգստանում էի, որ սնդիկի հետ իմ շփումը կարող է վնասել իմ առողջությունը»:

Այնուամենայնիվ, նմուշների արդյունքների մանրակրկիտ ստուգումը ցույց է տվել, որ այն կանանց մազերում, ովքեր կանոնավորապես սնվում են տարբեր տեսակի ձկնեղենով, սնդիկի պարունակությունն ավելի մեծ է, քան սնդիկի հետ աշխատած կանաց մոտ: Ամեն դեպքում, հետազոտության ժամանակ եղել են

որոշակի սահմանափակումներ՝ կապված չափի և կամավորների նույնականացման/իդենտիֆիկացիայի հետ: Ահա թե ինչու, անհրաժեշտ կլինի շարունակել հետազոտությունը , հատկապես հետազոտության մեջ ընդգրկված իսպանացի կանանց մոտ սնդիկի բարձր մակարդակների ուսումնասիրման համար:

Կարոլինա Ռուզիչկովան, որը նեկայացնում է «Առողջապահությունն առանց վտանգ պատճառելու» կազմակերպությունը, Բրյուսելում կայանալիք հանդիպման ժամանակ հայտնելու է իր կարծիքն այն մասին, որ եվրոպական հաստատությունները այժմ պետք է արագ գործեն սնդիկի, հատկապես սնդիկ պարունակող բուժսարքավորումների վերացման ուղղությամբ: «Մենք կուզենայինք հասնել այն բանին, որ եվրոպական հաստատություններն արգելեն բուժհիմնարկներում օգտագործվող չափիչ սարքերի, օր.՝ արյան ճնշման չափիչ սարքերի օգտագործումը, երաշխավորելով բացառություններ միայն այն դեպքում, երբ կլինիկական օգտագործման համար չեն լինի անվտանգ և ճշգրիտ այլընտրանքներ»,-գրում է նա իր զեկույցում:

Ջենոն Ջենսենը, որը ներկայացնում է «Առողջության և շրջակա միջավայրի ցանցը», իր զեկույցում ընդգծում է կանանց իրազեկելու անհրաժեշտության գաղափարն այն մասին, թե ինչպես կարող են նրանք պաշտպանել իրենց և իրենց երեխաներին, ի լրումն համընդհանուր արգելքի: Նա նշում է.«Եթե նույնիսկ այսօր դադարեցնենք ամբողջ սնդիկի արտադրությունը և թույլ չտանք, որ սնդիկը թափվի կամ արտանետվի, մեր սննդային պաշարը կմնա աղտոտված եկող տարիների ըն թացքում: Կանայք այս մասին պետք է տեղյակ լինեն այսօր»:

Քարոզարշավը հակված չէ կանանց կամ այլ կատեգորիայի մարդկանց ետ պահել ձկնեղենի և ծովային մթերքների գործածումից, քանի որ դրանք սննդարար նյութերի կարևոր աղբյուր են: «Մենք պարզապես ասում ենք, որ ավելի օգտակար են փոքր ձկները, որոնք ավելի քիչ են աղտոտված»,- եզրահանգում է տկն. Ջենսենը:

Երկու կազմակերպիչներն էլ հուսով են, որ քարոզարշավի միջոցով առաջնորդները և ողջ աշխարհի արդյունաբերությունների ղեկավարները կտեղեկանան մեր երեխաների առողջությանը սնդիկի պատճառած վնասի չափերի մեծացման և արդեն այսօր գործելու հրատապության մասին:

Նշումներ

1. Հետազոտության տվյալները տպագրված են «Կանգնեցնենք երեխայի ուղեղի ցամաքումը: Ինչու է պետք զբաղվել սնդիկի համընդհանուր աղտոտվածությամբ» զեկույցում: Վերջինիս մեջ նկարագրված են հղիության ընթացքում պտղի վրա և, ընդհանրապես, երեխաների վրա սնդիկի ազդեցության հետևանքները, և այն, թե ինչ պետք է կատարել սնդիկի ազդեցությունը պակասեցնելու համար: Սա մատչելի կլինի էլեկտրոնային կապով 2007թ. հունվարի 10-ին, սկսած ժամը 12:30-ից, www.env-health,org կայքում:
2. Գավին թեն Թուսչեր, բ.գ.դ., մանկաբույժ, Մանկաբուժության և նեոնատալոգիայի բաժին, Վեսթֆրիզ Գասթուիզ, Նիդերլանդներ
3. «Մնացեք առողջ, դադարեցրեք սնդիկի օգտագործումը» քարոզարշավը միավորում է «Առողջության և շրջակա միջավայրի միություն» (HEAL) և Եվրոպայում «Առողջապահությունն առանց վտանգ պատճառելու» (HCWH)

կազմակերպությունները, որպեսզի մոբիլիզացնի Եվրոպայի առողջապահական հաստատություններին՝ սնդիկի գործածության վրա գլոբալ արգելք դնելու նպատակով: Գործունեությունն ուղղված է առողջության, հատկապես երեխաների և հղի կանանց առողջության վտանգների մասին իրազեկության բարձրացմանը և կանանց ու բուժմասնագետների շրջանում տարվող բացատրական աշխատանքներին, թե ինչպես կարող են նրանք պաշտպանել իրենց և շրջակա միջավայրը սնդիկի ազդեցությունից:

Ծագման երկիրը	Մասնակիցների թիվը	Միջին մեծությունը
Հայաստան	11	0.13
Լեհաստան	24	0.25
Արգենտինա	8	0.16
Մակեդոնիա	19	0.16
Բուլղարիա	6	0.17
Նիդերլանդներ	8	0.22
Սլովակիա	9	0.26
Գերմանիա	17	0.29
Շվեդիա	5	0.3
Բելգիա	36	0.65
Չեխիայի Հանրապետություն	10	0.33
Իռլանդիա	18	0.35
Հնդկաստան	10	0.37
Բելառուս	11	0.43
Հարավային Աֆրիկա	3	0.53
Միացյալ Թագավորություն	12	0.54
Կիպրոս	9	0.55
Ֆրանսիա	8	0.57
Խորվաթիա	10	0.66
Ֆիլիպիններ	9	0.92
Իսպանիա	9	2.18

«Առողջության և շրջակա միջավայրի միությունը» (HEAL) միջազգային, ոչ կառավարական կազմակերպություն է, որը նպատակ ունի բարելավել մարդկանց առողջությունը հանրային քաղաքականության միջոցով, որը նպաստում է ավելի մաքուր և անվտանգ միջավայրի ձևավորմանը: Մեր աշխատանքում մենք դիմում ենք բնապահպանական գիտության տվյալներին, որոնք բացահայտում են շրջակա միջավայրի քայքայման հետևանքները մարդու առողջության վրա: Մենք ներկայացնում ենք Եվրոպայում գործող 50-ից ավել բազմաբնույթ՝ քաղաքացիների, պացիենտների, կանանց, բուժմասնագետների և բնապահպանների կազմակերպություններ, որոնք բնապահպանության և քաղաքականության հարցերը քննարկման են դնում տարբեր հարթակներում:

Ապագայի մեր պատկերացումը հետևյալն է՝ առողջ մոլորակ առողջ մարդկանց համար:

«Առողջապահությունն առանց վտանգ պատճառելու» կազմակերպությունը 55 երկրներում գործող ավելի քան 450 խմբերի միջազգային կոալիցիա է: Քանի որ մարդու առողջությունը սերտորեն կապված է շրջակա միջավայրի առողջության հետ, իսկ բուժական խնամքը հիմնվում է Հիպոկրատի «Նախ, մի վնասիր» սկզբունքի վրա, մենք կարծում ենք, որ բուժհաստատությունները պետք է, հնարավորության դեպքում, խուսափեն աղտոտող գործելակերպից: Մենք աշխատում ենք բուժական արդյունաբերությունն փոխակերպել այնպես, որ այն լինի էկոլոգիապես կայուն և չվնասի մարդկանց և շրջակա միջավայրին: Մեր անդամներն են՝ հիվանդանոցները, բուժմասնագետները, բուժքույրերը, համայքային խմբերը, առողջությամբ մտահոգ անձինք, պրոֆմիությունները, առողջության և շրջակա միջավայրի հարցերով զբաղվող կազմակերպությունները:

«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» հասարակական կազմակերպության մեջ ընդգրկված են փորձառու մասնագետներ՝ համաճարակաբաններ, բնապահպաններ, թունաբաններ, հիգիենիստներ, գիտնականներ: ՀԿ-ն տեղական կենտրոնների ազգային ցանց է, որն աշխատում է կայուն զարգացման, մարդու առողջության և շրջակա միջավայրի պաշտպանության ուղղությամբ: Քանի որ բուժհաստատությունները կոչված են բնակչության առողջության պահպանմանը, նրանց առաջնահերթ խնդիրն է չաղտոտել շրջակա միջավայրը: Կազմակերպությունն աջակցում է առողջության և շրջակա միջավայրի հիմնախնդիրների լուծմանը՝ կրթության, տեղեկատվական և հետազոտական ծրագրերի, որոշումներ կայացնողների նկատմամբ լոբբինգի, տեղեկատվական նյութերի ստեղծման, հրատարակման և բաշխման, միջազգային և ազգային կոնֆերանսներին ու համաժողովներին մասնակցելու միջոցով: Կազմակերպության հեռագնա նպատակն է՝ մեր երեխաներին՝ առողջ միջավայր, Հայաստանին՝ առողջ սերունդ: